

ՀԱՅ ԶՐՆՈՒՐԻ ԳՐԱԳԵՐԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԽՈՐԷՆ ՔԱՀ. ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆՑԻ.

№ 1

# Ա Յ Բ Բ Ե Ն Ա Ր Ա Ն

ԵՒ

## Ը Ն Թ Ե Ր Ց Ա Ր Ա Ն



Գ ի ն ն է 10 կրպ

491.99-8  
Հ - 25

ԹԻՖԼԻՍ

Արագածիպ ճնագիծկառ ՍԵՃԵՆ. Ժ. № 4  
1909

491-99-8

15 NOV 2011

Հ-25

PA

18558

**ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԻ ԳՐԱԿԱՐԱՆ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԻՆ ԽՈՐԷՆ ՔԱՀ. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՑԻ.

№ 1

# Ա Յ Բ Բ Ե Ն Ա Ր Ա Ն

ԵՒ

## Ը Ն Թ Ե Ր Ց Ա Ր Ա Ն

Կ ա գ ճ ե ց

Հ. ՀՍՅԿՍԶՈՒՆԻ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Արագատիպ «Նաղեժդա» ՍԵՄԵՆ. փ. № 4

1909

11 APR 2013  
1 APR 2013

ՀԱՅԵՐԷՆ ԱՅԲՈՒԲԵՆ

ՀԱՅԵՐԷՆ ԱՅԲՈՒԲԵՆ

ԳԼԽԱԳԻՐ

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ  
Խ Ծ Կ Հ Ջ Ղ Ճ Մ Յ Ն Շ Ո  
Չ Պ Ղ Ռ Ս Վ Տ Ր Ց Ի Փ Ք  
Օ Ֆ

ԳԼԽԱԳԻՐ

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ  
Ծ Կ Հ Ջ Ղ Ճ Մ Յ Ն Շ Ո Չ Պ  
Ղ Ռ Ս Վ Տ Ր Ց Ի Փ Ք Օ Ֆ

ԲՈՒՆՈՒԹՅԱՆ

ա բ գ դ ե զ է լ թ ժ ի լ լ լ լ լ  
կ ճ ճ ղ ճ ճ ղ ղ ղ ղ ղ ղ ղ ղ  
ս լ ա բ գ լ լ լ լ լ լ լ լ

ՇԵՂԱԳԻՐ

ա բ գ դ ե զ է լ լ լ լ լ լ լ լ  
ձ ղ ճ ճ ղ ղ ղ ղ ղ ղ ղ ղ ղ ղ  
գ լ լ լ լ լ լ լ լ

Պայնաւոր սաներ.— ա, է, ե, լ, լ, ո, ո, ո.



9969-53

ՄԻ ՎԱՆԿԱՆԻ ԲԱՌԵՐ.

աղ բաղ դաղ թաղ կաղ մաղ քաղ դար չար լար  
զար ճար շար պար աղ բակ թակ խակ ծակ հակ  
փակ բան գան թան խան ճան սան ցան ցած  
քած հաց լաց թաց բաց կաց ձախ վախ ցախ  
դափ ծափ չափ տափ տաք լաք դատ մատ պատ  
տատ վատ բաշ ճաշ նաշ աջ քաջ խաչ պաչ  
բեր կեր բեռ կեռ ծեծ հեծ մեծ բեղ գեղ դեղ  
նեղ ցեղ էգ ծէք մէկ շէկ քիչ լիճ քիթ շիթ տիպ  
բիզ վիզ ծիլ շիլ խիտ ծիտ շիշ փոս բոց գոմ  
մոմ ձօն տօն մութ տուն շուն ճիւղ գիւղ աչք  
իղձ ինձ իւղ իւր յոյս բոյս լոյս թիւ ծիւ նաւ  
դաւ սև թև այս այդ այն կարս վան Մուշ Սիս  
կուր Բահ Հայք Հայկ Տիր Յոբ Գնէլ Գիւտ Դովտ.

ԵՐԿՈՒ ՎԱՆԿԱՆԻ ԲԱՌԵՐ.

ան-տառ, եր-կար, սի-րուն, փա-փուկ, դօ-տի,  
գրա-շար, գա-զան, մա-քուր, սպի-տակ, կար-միր,  
ար-իւն, ա-նիւ, գի-շեր, այն-քան, Աար-գիս, Բա-  
քու, Մա-սիս, Ա-րաքս, Վօլ-գա, Կի-և:

ԵՐԵՔ ՎԱՆԿԱՆԻ ԲԱՌԵՐ.

թա-գա-ւոր, մա-տա-նի, գե-ղե-ցիկ, գիւ-ղա-ցի,  
մի-ա-միտ, դա-սա-բան, տա-նու-տէր, ա-շա-  
կերտ, վար-ժա-պետ, մար-գա-րիտ, Յով-հան-  
նէս, Ստե-փա-նոս, Ե-րե-ւան, Ա-խու-րեան, Պե-  
տեր-բուրգ, Մի-տա-վա:

ՉՈՐՍ ՎԱՆԿԱՆԻ ԲԱՌԵՐ.

թրդ-թա-վա-ճառ, հա-զա-րա-պէտ, կա-ռա-վա-րիչ,  
եր-կա-թու-ղի, ու-րա-խու-թիւն, ճրշ-մար-տու-  
թիւն, աշ-խար-հա-բար, սա-կա-ւա-թիւ, զի-նուո  
րա-կան, կա-թու-ղի-կոս, Ա-բի-սո-ղոմ, Սո-սրո-  
վա-դուխտ, Ե-րու-սա-ղեմ:

ԲԱԶՄԱՎԱՆԿ ԲԱՌԵՐ.

սը-տա-խօ-սու-թիւն, թա-գա-ւօ-րա-կան, ար-տա-  
սա-նու-թիւն, ար-դիւ-նա-բե-րու-թիւն պա-տա-  
սխա-նա-տու-թիւն:

Ա-լէք-սան-գրա-պօլ, Կոս-տան-դնու-պօ-լիս, Փոր-  
տու-գա-լի-ա, Ե-կա-տե-րի-նո-գար:

ԵՐԿ ԲԱՐԲԱՌՆԵՐ

այ ոյ եա եօ իւ վայ բայ պայծառ փայտ յոյս  
բոյս տարակոյս նոյ խոյ սենեակ դգեակ արդեօք  
եօթն կարծեօք արիւն ուրախութիւն.

ԿԱՐԴԱԼ ՃԻՇՏ ԱՐՏՍՍԱՆՈՒԹԵՄՄԲ

մարգ—մարթ, որդի—վորթի, վարդ—վարթ,  
բերդ—բերթ, օձ—օց, էգ—էք, էգուց—էքուց,  
մարգարէ—մարքարէ, հոգի—հօքի, ոտ—վոտ,  
որ վոր, ով—օվ, ովկիանոս—օվկիանոս, ողջ—  
վողջ, Մկոյ—Մկօ, Յարոյ—Յարօ, փրկանք—  
փրկանք, գտնել—գըտնել, սկիզբ—ըսկիզբ, Աս-  
տուած—Աստված, խօսուել—խօսվել, վառուել—  
վառվել, օրուայ—օրվայ, զուարթ—զվարթ, աղ-

ջրիկ — ախշիկ, եղբայր — եխպայր, կեղտ — կեխտ,  
աղբ — ախփ, ողբ — ողփ, աղբատ — ախքատ, դարձ-  
դարց, բարձ — բարց, բուրդ — բուրթ.

ութը տարի — ութն ամիս, տասը մարդ — տասն  
օր, բաժակը կոտրուեց բաժակն ընկաւ, մայրը  
գնաց մայրն եկաւ, կտրտել — կը-տըր-տել, թան-  
ձը — թան-ձըր, զգաստ — ըզ-գաստ, անվնաս — ան-  
վը-նաս.

յամառ յանգ յարդ յարկ յետ համար հանք հարթ  
հարկ հետ.

քահանայ ապագայ ներկայ ամենօրեայ յետոյ  
սիրոյ ազնուաբարոյ ներքոյ.

անիւ ազնիւ պատիւ հիւանդ դիւան արեւ անձրեւ  
տերև անձրևոտ աւազ աւազակ ուրազ ուղիղ ով  
բով կով ճամբով թիակով.

անտառ ուռիան բառ դուռ բուռ ծառայ գառ  
նուկ կառք արդար ճար ճառ բարի չար ծառ  
վառարան ապուր ծարաւ.

ՀԱՍՍԱՐԱԿ ԱՆՈՒՆՆԵՐ

գիրք զրիչ սեղան հաց ճիճու գայլ երկիր մա-  
նուշակ գետ կէտ ձէթ թռչուն մահակ վանք սար

ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐ

Սմբատ, Վարդան, Եղօ, Կարօ, Անի, Ղարաբլի-  
սա, Թօուզ, Նորաշէն, Երևան, Էջմիածին, Մա-  
սիս, Արագած, Քասաղ, Փամբակ, Գորիս, Սև-ծով,  
Սևանայ-լիճ, Առաքս-գետ.

ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐ

ես դու նա մենք դուք նրանք  
ինքս ինքդ ինքը ինքներս ինքներդ իրենք  
այս այդ այն սա դա նա  
միմիանց իրար մէկմէկու:  
որ ով ինչ ուր երբ:  
ես գնացի, դու լաց եղար, նա ծիծաղեց.  
ինքս տեսայ, ինքդ ասացիր, ինքը գնաց,  
այս մարդը, այդ գառը, այն սղուէսը,  
սա ասաց, դա խօսեց, նա պատմեց:  
Երկուսով միմիանց օգնում էին,  
նրանք իրար հետ կուռեցին:  
Այդ մարդիկը մէկ-մէկու կերան:  
Գուք որ խելք չունէք, գոնէ սուս կացէք:

ԱԾՈՒԿԱՆ ԲԱՌԵՐ

սպիտակ սև կարմիր կանաչ կապոյտ  
լաւ բարի վատ չար վնասակար,  
գեղեցիկ փափուկ տգեղ անպէտք,  
կեղծաւոր ժլատ ագահ արդար,  
տափակ գլուխ, պղտոր ջուր, սուտ խօսք,  
ազատ տուն, ապերախտ որդի, սին փառք,

Քաջ Վարդան, Մեծն Տիգրան, Արի Արտակ,  
անգոյն անբաղդ արարդար անտակ,  
դժգոյն դժբաղդ քամբաղդ տհաճ:  
արծաթէ փայտէ քարէ աղիւսէ երկաթէ:

ՄԱԿԲԱՅ

Այստեղ այնտեղ երբեմն երբէք դեռ  
արդէն այնուհետև մեծապէս ազատօրէն,  
շատ քիչ անշուշտ 'ի հարկէ անպատճառ,  
ոչ չը մի թերևս գուցէ միթէ արդեօք

ՇԱՂԿԱՊ

որ թէ եթէ որովհետև մինչ քան և ու էլ ևս այլ  
բայց սակայն իսկ կամ ապա անգամ թէ՞ գոնէ  
գէթ մանաւանդ այսինքն արդ ուրեմն ուստի  
նաև այլև:

ԿէՏԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՇՆՆԵՐ

- (.) վերջակէտ (') շեշտ
- (.) միջակէտ (°) հարցական նշան
- (,) ստորակէտ (˘) բացազանչական նշան
- (^) բուխ (---) գիծ
- («») չակերտ (-) միութեան գիծ
- ( ) փակագիծ (-) ենթամնայ
- (...) բազմակէտ (') ասլաթարց:

ՁԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

այ վայ օխայ օխ սև ասող ափսոս ան բո՛ն ան

էն պահօ օհօ ըհը թիւհ անա տօ ծօ հաժէ դեհ  
հապա սլ էյ հօ հօ փըշտ

ԹՈՒԱԿԱՆ ԱՆՈՒՆ

մէկ երկու երեք չորս հինգ վեց եօթը ութը ինը  
տաս տասնամէկ տասներկու տասներեք տասն-  
ևչորս տասնևհինգ. քսան, քսան և մէկ, քսան և վեց.  
երեսուն քառասուն յիսուն վաթսուն եօթանա-  
սուն ութսուն ինսուն հարիւր, հազար, երկու  
հազար, տասըհազար, քսանհազար, հարիւր հազար.

ա — 1	ժա — 11	խ — 40	ճխթ — 149
բ — 2	ժբ — 12	ծ — 50	մ — 200
գ — 3	ժգ — 13	կ — 60	յ — 300
դ — 4	ժդ — 14	հ — 70	ն — 400
ե — 5	ժե — 15	ձ — 80	շ — 500
զ — 6	ի — 20	ղ — 90	ո — 600
է — 7	իա — 21	ճ — 100	չ — 700
ը — 8	իդ — 24	ճժա — 111	պ — 800
թ — 9	իթ — 29	ճժբ — 112	ջ — 900
ժ 10	լ — 30	ճժգ — 116	ռ — 1000

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

աէր տիրել տիրուհի տիրական,  
հանդէպ հանդիպել հանդիպում,  
բժիշկ բժշկել բժշկութիւն,  
մէկ մի միաւորել միակ միութիւն,  
ծոյլ ծուլանալ ծուլութիւն,  
սէր սիրել սիրուն սիրելի սիրահար,

դէմք դիմակ դիմակահանդէս դիմաց  
սուրբ սրբութիւն սրբապղծութիւն.

որդեակ անակ դոնակ խմբակ,  
ազգային մարդկային ծովային դաշտային,  
զրկանք փրկանք մարզանք տանջանք,  
ուժգին ցաւագին ուղորմագին լալագին,  
վատագոյն մեծագոյն լաւագոյն փոքրագոյն,  
ննջեցեալ մեռեալ դարձեալ հեծեալ,  
երկաթեայ արծաթեայ հնգամեայ սևաչեայ,  
արեւելեան արեւմտեան Մամիկոնեան,  
ուժեղ հանճարեղ զօրեղ,  
արծաթեղէն ոսկեղէն կանաչեղէն մսեղէն:

վարդենի վայրենի թթենի մայրենի,  
փոքրիկ կլորիկ մասնիկ ուսուցիկ,  
փրկիչ նկարիչ ուսուցիչ զրիչ,  
սօսափիւն թնդիւն հնչիւն,  
օտարական թշուարական օգնական,  
դպրոց խարտոց զօրանոց կթոց,  
ձանձրոյթ սովորոյթ հասոյթ,  
մեծութիւն ազատութիւն բնութիւն:

փշոտ ամաչկոտ բրդոտ բարկացկոտ,  
ճանապարհորդ քառորդ անցորդ,  
յօդուած քայլուածք նայուածք,  
գեղջուկ բանուկ կարուկ իշուկ,  
թագուհի տիրուհի վարժուհի հայուհի,

ուսումն պատանմունք ցնցում հարցում,  
թուշուն շարժուն զիտուն խօսուն,  
Հայաստան այգեստան ապաստան,  
երզան ննջարարան գործարան,

հայերէն վրացերէն ռուսերէն լեհերէն,  
գիւղացի բերանացի քաղաքացի,  
ծողկաւէտ հոտաւէտ գինեւէտ,  
ձիաւոր գործաւոր թագաւոր հոգևոր,  
արքունի հայրունի Հայկազունի,  
սոաջին սոանձին վերջին հոգմային,  
խառնուրդ խորհուրդ կողմնակի շեշտակի  
շրջան գալուստ պոչատ պասուց.

ասել խօսել պատմել գնել գրել,  
խողալ վխտալ ցանկալ կարդալ,  
բարկանալ զարմանալ ցանկանալ,  
կամենալ մօտենալ վախենալ,  
փախչել թռչել խնչել մոնչել  
փլչիլ ուռչիլ կսրչիլ,  
ուռիլ փքիլ ծողկիլ բնակիլ,  
հեռացնել թագցնել մտցնել ներկայացնել,  
համարուիլ լցուիլ խօսուիլ տեսնուիլ:

Երկուշաբթի	Նոր-տարի	ցերեկ
Երեքշաբթի	Ծնունդ	գիշեր
չորեքշաբթի	Զբօրհանք	կէսօր
հինքշաբթի	Տեսնունդառաջ	կէս-գիշեր

ուրբաթ	Բարեկենդան	առաւօտ
շաբաթ	Ծաղկազարդ	երեկոյ
կիրակի	Ոսնալուայ	արշալոյս
յուշուար	Զատիկ	վերջալոյս
փետրուար	Աւետում	արեգակ
մարտ	Համբարձում	լուսին
ապրիլ	Հոգեգալուստ	աստղ
մայիս	Վարդավառ	անձրև
յունիս	Վերափոխում	շաղ
յուլիս	Խաչվերաց	կարկուտ
օգոստոս	Նաւակատիք	ձիւն
սեպտեմբեր	Խթումն	քամի
հոկտեմբեր	Մեռելոցք	փոթորիկ
նոյեմբեր	Միջինք	կայծակ
դեկտեմբեր	Խաւարումն	երկրաշարժ

ժամ, ժամանակ, ըոպէ, վայրկեան, օր, շաբաթ, ամիս, տարի, դար, գարուն, ամառ, աշուն, ձմեռ, եղանակ, արևելք, արևմուտք, հարաւ, հիւսիս, հարիւրամեակ.

ԻՆՉ ԵՆՔ ԱՆՈՒՄ

այժմ	մէկէլ օր
ես լսում եմ	լսում էի,
դու լսում ես	լսում էիր,
նա լսում է	լսում էր,
մենք լսում ենք	լսում էինք
դուք լսում էք	լսում էիք
նրանք լսում են	լսում էին

երեկ	վաղը
ես լսեցի	լսելու եմ
դու լսեցիր	լսելու ես
նա լսեց	լսելու է
մենք լսեցինք	լսելու ենք
դուք լսեցիք	լսելու էք
նրանք լսեցին	լսելու են

քեզ հրամայում եմ՝ խօսիր, գնա, տուր, նայէ, ձեզ հրամայում ենք՝ խօսեցէք, գնացէք, տուէք, նայեցէք.

երեկ

ես վախեցայ	ասացի տեսայ
դու վախեցար	ասացիր տեսար
նա վախեցաւ	ասաց տեսաւ
մենք վախեցանք	ասացինք տեսանք
դուք վախեցաք	ասացիք տեսաք
նրանք վախեցան	ասացին տեսան

ստիպում են թէ՛ մտածում եմ

պիտի խօսեմ	կը խօսեմ
պիտի խօսես	կը խօսես
պիտի խօսէ	կը խօսէ
պիտի խօսենք	կը խօսենք
պիտի խօսէք	կը խօսէք
պիտի խօսեն	կը խօսեն

ասում են թէ չեն ուզում խօսել  
 ես չեմ խօսիլ չէի խօսիլ  
 դու չես խօսիլ չէիր խօսիլ  
 նա չի խօսիլ չէր խօսիլ  
 մենք չենք խօսիլ չէինք խօսիլ  
 դուք չէք խօսիլ չէիք խօսիլ  
 նրանք չեն խօսիլ չէին խօսիլ

ՀՈՒՆՆԵՐ

մէկ

բաժակ շուր պարտէզ  
 բաժակի շրի պարտիզի  
 բաժակից շրից պարտիզից  
 բաժակով շրով պարտիզով  
 բաժակում շրում պարտիզում

մի քանի

բաժակներ շրեր պարտէզներ  
 բաժակների շրերի պարտէզների  
 բաժակներից շրերից պարտէզներից  
 բաժակներով շրերով պարտէզներով  
 բաժակներում շրերում պարտէզներում

մէկ

Աբգար Աստուած Յովհաննէս  
 Աբգարի Աստուծու Յովհաննիսի  
 Աբգարից Աստուծուց Յովհաննիսից  
 Աբգարով Աստուծով Յովհաննիսով

մէկ

Որք թիֆլիս Կոստանդնուպօլիս  
 Սսի թիֆլիսի Կոստանդնուպօլիսի  
 Սսից թիֆլիսից Կոստանդնուպօլիսից  
 Սսով թիֆլիսով Կոստանդնուպօլիսով  
 Սսում թիֆլիսում Կոստանդնուպօլիսում

մէկ

մի քանի

այգիւ ձիւ այգիներ ձիեր  
 այգու ձիու այգիների ձիերի  
 այգուց ձիուց այգիներից ձիերից  
 այգով ձիով այգիներով ձիերով  
 այգում ձիում մէջ այգիներում ձիերի մէջ

մէկ

մի քանի

բնութիւն ձուկն բնութիւններ ձկներ  
 բնութեան ձկան բնութիւնների ձկների  
 բնութիւնից ձկնից բնութիւններից ձկներից  
 բնութիւնով ձկնով բնութիւններով ձկներով  
 բնութեան մէջ բնութիւններում ձկներում

մէկ

մի քանի

օր տէր օրեր տէրեր  
 օրուան տիրոջ օրերի տէրերի  
 օրուանից տիրոջից օրից տէրերից  
 օրով տիրոջով օրերով տէրերով  
 օրում տիրոջ մէջ օրերում տէրերում

հայր ճիւղահայր հայրեր  
 հօր ճիւղով հայրերի

հօրից	Տիրամօրից	հայրերից
հօրով	Տիրամօրով	հայրերով

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

մէկ

ես, ինքս, դու	ինքդ,	նա, ինքը,
իմ ինձ, քո, քեզ,	իր, իրեն	նրա, նրան.
ինձնից	քեզնից	իրենից
ինձնով	քեզնով	իրենով
ինձնում	քեզնում	իրենում

մի քանի

մենք,	դուք	իրենք	նրանք
մեր մեզ	ձեր ձեզ	իրենց	նրանց
մեզնից	ձեզնից	իրենցից	նրանցից
մեզնով	ձեզնով	իրենցով	նրանցով
մեզնում	ձեզնում	իրենցում	նրանցում

մէկ

մի քանի

սա	դա	սրանք	դրանք
սրա-սրան	դրա դրան	սրանց	դրանց
սրանից	դրանից	սրանցից	դրանցից
սրանով	դրանով	սրանցով	դրանցով
սրանում	դրանում	սրանցում	դրանցում

ՄԱՐԴ ԷՐ ՈՐՈՆՈՒՄ

Հին ժամանակ ապրում էր մի իմաստուն մարդ: Նա տեսաւ, որ աշխարհը շատ է փշացել և մարդիկ բոլորովին անպիտանացել են և մի

օր ցերեկով լապտերը ձեռքին դուրս եկաւ և ման էր գալիս քաղաքի փողոցներով: Նրա ծանօթներից մէկը տեսնելով այդ հարցրեց.

— Ինչո՞ւ ցերեկ ժամանակ լապտերով ես շրջում:

— Մարդ եմ որոնում—, պատասխանեց իմաստունը:

ԱՐԵԻԻ ՏՈՒԱԾ ՕԳՈՒՏԸ.

Երկրագնդին խնամող, պահող և պահպանող ձեռքը արևն է: Նա լուսաւորում է երկիրը, տաքացնում մեզ, նրանով են աճում բոյսերը, նրանով են ապրում աշխարհիս վրայ եղած բոլոր արարածները՝ մարդը, գազանը, թռչունը, կենդանին, ձուկը, միջատը: Ամենից շատ մենք ենք օգտուում արևից և եթէ ուզում ենք որ առողջ լինենք, պէտք է շրջենք պայծառ արևի տակ, միայն թէ աչքերին ճառագայթները չգիպչեն: Այն ժողովրդները, որոնք տաք և արևաշատ երկիրներում են ապրում, աւելի առողջ են, քան այն ազգերը, որոնք արևից շատ քիչ են օգտուում:

Երջանիկ է գիւղացին, որ միշտ արևի լոյսի տակ է աշխատում:

Թ Ո Ւ Ղ Թ.

Հին ժամանակ մարդիկ թուղթ չունէին և



գրում էին քարի, աղիւտի, բրոնզի, պսպիրուս բոյսի շերտերի և կաշու վրայ: Այժմ շատ այդպիսի հին գրութիւններ կան, որոնք պահւում են գրագարաններում և թանգարաններում:

Քրիստոսից 123 տարի առաջ շինացիք թուղթ հնարեցին և ուրիշ երկիրներն էլ նրանցից սովորեցին, այդ արհեստը ու աւելի կատարելագործեցին:

Առաջ թուղթը պատրաստում էին առանձին գործարաններում, որոնք շրագացի ձևով էին շինուած երկաններով, բայց 1789 թ. եւրոպացիք թուղթ շինելու մեքենայ հնարեցին և գործը շատ հեշտացաւ ու այսօր մենք ունենք ձերմակ թուղթ:

Թուղթը պատրաստում են փալասներից, բամբակից և զանազան բոյսերից:

Ա Ր Տ Ա Ւ Ա Ջ Դ .

Հայոց Արտաւազը թագաւորը շատ անպիտան մարդ էր և որովհետև նա նախանձոտ էր, աւանդութիւնը պատմում է, որ նրա հայրը նրան անիծեց գերեզմանից և անէծքը կատարուեց:

Արտաւազը շուտ շուտ որսի էր գնում Մասիս սարի բարձունքները, ուրախանում և որսով տուն վերադառնում: Մի օր նա սովորականի պէս որսի գնաց Մասսի բարձունքները, նրան ուղեկցում էին հայ իշխանները, զինակիրները, թիկնապահները և ծառաները: Նա իր հետ վեր-

ցրել էր և իր մտերիմ գամփո շներին, որոնցից ամենքը վախենում էին:

Հայոց թագաւորը իր հետևորդներով բարձրացաւ Մասսի լանջերով:

— Տէր թագաւոր, կանչեց իշխաններից մէկը, — բարձունքի վրայ վարագ եմ տեսնում:

Թագաւորը գլուխը բարձրացրեց և նայեց դէպի վեր: Նրա ձին էլ կարծես հասկացաւ, որ իր վրայ նստողը անհանգիստ է և ականջները պրեց: Արտաւազը երկար չստիպեց և իր հրեղէն ձիուն մտրակեց: Նա չէր գնում, այլ թռչում էր:

Վազում էին և գամփոները, բայց կատաղի մըռնչիւն հանելով վարագը՝ դէպի վեր էր փախչում:

Երկար ժամանակ Արտաւազը հետևեց վարագին, պարպեց իր նետերը, բայց վարագը կորաւ:

Արտաւազը ինչքան բարձրանում էր, այնքան եղանակը փոխուում էր և երբ նա արդէն Մասսի գագաթն էր հասել, յանկարծ սաստիկ փոթորիկ բարձրացաւ: Նա կորցրել էր հետևորդներին, իսկ կատաղած ձին այս ու այն կողմն էր ընկնում. յանկարծ մի զարհուրելի վիճ բացուեց և երկիրը շարժուեց. ձին նետուեց դէպի վիճը իր հետ տանելով Արտաւազին, նրա ետևից գահավիժուեցան և գամփոները:

Վիճը շատ խոր էր և երեք օր ու երեք գիշեր նրանք ընկնում էին: Յանկարծ նրանք դուրս եկան մի գնդան, որտեղ և կանգ առան:

Արտաւազդը կորած էր, որովհետեւ այն գրնդանը քաջքերի թագաւորութեան էր պատկանում և հէնց որ նրանք տեսան Հայոց թագաւորին, իսկոյն շրջապատեցին, ծանր շղթաներով կապտտեցին նրան և աւրան իրենց թագաւորի մօտ:

Տխուր և տրտում մօտեցաւ Արտաւազդը քաջքերի թագաւորին: Թագաւորը խօսեց.

— Դու Հայոց աշխարհը տանջեցիր, դու հօրդ նախանձեցիր, դու քո և հօրդ բարերարներին սպանտտեցիր և այսօր ես Մասեաց քաջերի և քաջքերի թագաւորս շղթայելով պիտի մեխեմ այս գնդանում. դու պէտք է ապրես յաւիտեան, տանջուես, չարչարուես մինչև որ իմ թագաւորութիւնը, որ վերջ չունի, վերջանայ և այն օրը դու կնգատուես և դուրս կերթաս լոյս աշխարհը, որը և կը կործանես, որովհետեւ իմ թագաւորութիւնից յետոյ այն լոյս աշխարհն էլ վերջանայ, որտեղ դու թագաւորում էիր:

Մոնչաց առիւծ Արտաւազդը և նորից շարժուեց երկիրը, հողմ բարձրացաւ, հողմի հետ լսուեց և նրա ձայնը, բայց ողորմօղ չկա՛ր:

— Չարկեցէք, գարբիններ—, որոտաց Քաջքերի թագաւորը:

Իսկոյն նրա շղթաները մեխեցին մի անգլին ժայռից: Նրա հետ մեխեցին շղթայակապ ձիւռն և թագաւորի հրամանով գամփոններին թոյլ տուին Արտաւազդին պահպան կանգնել:

Շղթայուած թագաւորը կատաղել էր, նա

չկարողացաւ շղթաները կտրել, բայց ժայռը պոկուեց իր տեղից. նա փախչում էր Մասսից էլ մեծ մի ժայռ մէջքին: Ետևով տեսան նրան և գարբինները նրան երկաթէ ժայռից մեխեցին:

Էլ փախչելու հնար չկար:

Թագաւորի գամփոնները խզոււմ էին նրան, ուզում էին ազատել, բայց ինչքան նրանք կըրծում էին շղթաները, այնքան լոյս աշխարհի գարբինները խփելով իրենց սալերին նրա շղթաները ամրանում էին:

Եւ այդպէս այն օրից սկսած Մասսի վիհում շղթայուած է Հայոց Արտաւազդ թագաւորը, հաւատարիմ գամփոնները անվերջ կըրծում են նրա շղթաները, շատ անգամ մի շղթայ է մտում որ այդ էլ կըրծեն և նրան ազատեն, Աւագ Հինգշաբթի օրերը շղթաները կտրոււմ են և նա հեծնում է իր ձին որ փախչի քաջքերի թագաւորութիւնից, գայ մեր լոյս աշխարհը կործանի, սակայն հայոց գարբինները լաւ գիտենալով նրա այդ շար միտքը, Աւագ Ռւրբաթ օրը ծէգին վերցնում են իրենց ծանր մուրճերը, երեք անգամ գարկում իրենց սալին և շղթաները նորից կապոււմ են: Երբեմն Արտաւազդը բարկանում է ու շարժոււմ. նրա շարժումից շարժոււմ է և աշխարհը և միևնոյն ժամանակ լսոււմ է նրա գամփոնների խուլ սոնոցը, իսկ Մասսի գագաթին մերթ քամի է փչում և մերթ փոթորիկ բարձրանում, որովհետեւ շղթաների տակ Արտաւազդը շատ ծանր

կերպով շունչ է բաշում:

Երբ նա ազատուի աշխարհը պիտի կործանուի:

Ա.Ռ.Ա.ԾՆԵՐ.

Ինչ կը ցանես այն կը հնձես: Վաղ թէ ուշ հարուստը աղքատի պէտք կունենայ: Բանն արն, յետոյ պարծեցիր: Մարդս անզգամ չի ծնուում, այլ յետոյ է անզգամ դառնում: Արտասուկըով պարտքը չի վճարուի: Խելօքի հետ քար կը լին, յիմարի հետ փլաւ մի ուտիլ: Ճրագն իր տակին լոյս չի տալ: Նա է բարեկամ, որը քեզ կ'օգնէ նեղութեան օրերում: Այս կեանքը պատերազմ է: Մարդս քանի լեզու խօսել գիտենայ, այնքան մարդ է: Վերամակիդ հաւասար մեկնիր ոտներդ: Երկաթը տաք տաք կը ձեծեն: Շան հետ բարեկամացիր, փայտը ձեռքէցդ մի գցիլ: Մարը սարին չի գիպչիլ, մարդը մարդուն կը գիպչի:

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ Ա.Ռ.Ա.ԶԻՆ

ՀԱՅԿ.—Արամ, կարդացիր այս Ալբերնարան-  
Ընթերցարանը:

ԱՐԱՄ.—Կարդացի, բայց քիչ բան հասկացայ:

ՀԱՅԿ.—Ինչո՞ւ, չէ՞ որ այբուբենից է ըս-  
կուում և շատ հասկանալի է: Մենք մի ազգ  
ենք և կոչուում են հայ, խօսում ենք մի  
լեզուով, որ կոչուում է հայերէն կամ  
հայոց լեզու:

ԱՐԱՄ.— Բայց այստեղ գրուած է այդ լեզուով,  
այստեղ չեն խօսում, այլ կարդում են:

ՀԱՅԿ.— Այո, գրուած է այն, ինչ որ մենք  
ասում ենք, պատմում, խօսում ենք, իսկ  
խօսելիս մեր մտքերն ենք ասում: Այս գիրք  
գրողը վերցրել է և ինչոր պիտի ասէր գրել  
է թղթի վրայ, տարել է տպարան, տպել  
տուել և ահա մենք կարդում ենք:

ԱՐԱՄ.— Երբ մենք խօսում ենք հօ չենք  
ասում թէ ինչ տեղ ինչ կէտ պիտի գնենք,  
ինչո՞ւ այս գիրք գրողը ինչոր կէտեր է գրել:

ՀԱՅԿ.— Լսիր, բացատրեմ այդ բոլորը: Մենք  
որ խօսում ենք իրար հետ, հասկանում ենք  
իրար, այնպէս չէ՞, ուրեմն մի միտք ենք  
ասում օրինակ. — Ա.բ.ա.մ.ը գիրք է կար-  
դում, դու այս խօսքերը հասկանում ես:

ԱՐԱՄ.— Այո, հասկանում եմ:

ՀԱՅԿ.— Երբ դու մի հասկանալի միտք ես  
ասում, դրան ասում են թէ դու մի նախա-  
դասութիւն ասացիր: Այս բառից չը վա-  
խենաս, ուզում է ասել թէ մի այնպիսի խօսք  
ես ասում, որ ամենքն էլ կը հասկանան:  
Ասելու փոխարէն կարող ես թղթի վրայ գրել,  
միևնոյն է, նրա անունը էլի նախադասու-  
թիւն կլինի: Ահա քեզ օրինակներ. Սմբատը  
քաղաք գնաց: Թոշու՞նը վախեցաւ և թռաւ:  
Քարերը թափուեցան: Սառուցը հալուում է:

Մրանք նախագասութիւններ են և եթէ մենք  
 գրենք առանց կէտերի շատ սխալ կը հաս-  
 կացուի: Ահա գրեմ ու տես, Սմբատը քա-  
 յաք գնաց թռչունը վախեցաւ և թռաւ քա-  
 բերը թափուեցան սառուցը հալուում է: Ի՞նչ  
 գուրս եկաւ. յիմար բան և մարդիկ վերցրել  
 են կէտերեն գրել ու բաժանել միմեանցից:  
 Մարդիկ մի բան էլ հնարել են՝ երբ մարդու,  
 քաղաքի, գետի կամ ուրիշ մի յատուկ անուն  
 են գտել, վճռել են սկսել գլխատառով, որ-  
 պէս զի ուրիշ բաների հետ չխառնուեն: Երբ  
 նոր բան ես գրում կամ մի նամակ, առա-  
 ջին խօսքը միշտ գլխատառով պիտի գրես և  
 մէկէլ երբ վերջակէտ (:) է գրուած լինում  
 նրանից յետոյ պէտքէ գլխազրով գրես. ահա  
 քեզ օրինակ.

Ես եկայ քաղաքից Սմբատի մօտ: Նա  
 տանը չէր և Երևան էր գնացել:

Խ Օ Ս Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

ԱՐԱՄ.— Այս գրքի սկզբում գրուած է մի բառ՝  
 — վանկ. դա ի՞նչ բան է:

ՀԱՅԿ.— Բառերը գրում են տառերով. օրի-  
 նակ Վարդան բառի մէջ կայ վեց տառ՝ Վ-ա-  
 ր-դ-ա-ն: Այս բառը մենք կարող ենք բա-  
 ժանել և երկու մասի, դէ՛հ ինքդ բաժանիր

ԱՐԱՄ.— Վա-րդան:

ՀԱՅԿ.— Այդպէս բաժանել չի լինի, որովհետև  
 մէջտեղը անշնորհք է, բայց եթէ ասենք  
 Վար-դան, այն ժամանակ ուրիշ բան է և հէնց  
 այդ բառը երկու վանկից է կազմուած, առաջին  
 վանկն է Վար, իսկ երկրորդ գան, որով-  
 հետև մի շնչով կարող ենք ասել: Ուրեմն  
 բառերը կազմուած են վանկերից, իսկ բա-  
 ուերից էլ կազմուած է նախագասութիւնը:

ԱՐԱՄ.— Իսկ ի՞նչ բան է երկարբառը:

ՀԱՅԿ.— Շատ հասարակ մի բան. վերցնում ենք  
 երկու ձայնաւոր տառեր, օրինակ ե և ա, և  
 միացնելով մի վանկ ենք կազմում, որ կլինի  
 եա: Ռուսները մի տառ ունեն—я, իսկ  
 մենք այդ հնչիւնը արտասանելու համար  
 երկու տառ ենք գրում: Այդպէս է և ուո-  
 սերէն օ տառը և մեր իւ, ոսերէն օ, իսկ  
 մեր եօ:

Խ Օ Ս Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

ԱՐԱՄ.— Բառերը քանի տեսակ են:

ՀԱՅԿ.— Մի քանի: Օրինակ երբ բառը մի օրևէ  
 բանի անունն է, մի օրևէ առարկայ է ցոյց  
 տալիս, ինչպէս՝ մարդ, գազան. թռչուն, քար,  
 սար, աստղ, կոչւում է գոյական անուն:  
 Երբ բառերը ցոյց են տալիս առարկայի որ-  
 պիսի կամ ինչպիսի լինելը, կոչւում են ածա-  
 կան անուն. օրինակ՝ սև գլխարկ. հար-

ցնում ենք ինչպիսի գլխարկ, այսում են կլոր գլխարկ, ամարուայ՝ նոր՝ նորածն, մահուղէ, ձմեռուայ, մեծ, փոքր, սև, սպիտակ գլխարկ, այստեղ, սև, մեծ, կլոր, մահուղէ, ձմեռուայ, նոր, նորածն բառերը ածական են գլխարկ բառին

Երբ մի բառ առանձին միտք է արտայայտում կամ թէ ցոյց է տալիս առարկայի գործողութիւնը, կոչում է բայ. օրինակ՝ Գարեգինը գնաց ուսումնարան, կարդաց, եկաւ, կերաւ, խմեց, խօսեց և վերջը քնեց. եթէ մենք կարդաց, գնաց, եկաւ, խմեց բառերը առանձին ասէինք էլի հասկանալի կլինէր:

Եթէ մէկի անունը տալու փոխարէն մի ուրիշ բառ ենք դնում կամ մի առարկայի անուն տեղ ենք բառ դնում. կոչում են դերանուն. օրինակ՝ Յակոբը գնաց խանութ, նա այնտեղ ճաշեց և վերադարձաւ: Փոխանակ ասելու թէ Յակոբը ճաշեց, ասում ենք նա ճաշեց. այդ նա դերանուն է:

Մակբայն էլ ցոյց է տալիս թէ ինչպէս է մի բան եղել կամ լինում, կամ որտեղ, կամ երբ, կամ ինչքան անգամ. օրինակ՝ գինուորը լաւ կուտեց, շատ քաջութիւններ արեց ամենուրէք:

Շաղկապը շատ հասարակ բան է օրինակ ասում ենք՝ «հայր ու մայր», այստեղ ու կապում է

իրար հետ և փոխանակ ասելու կապող ասում ենք՝ շաղկապ:

ԽՕՄԱԿՅՐԻԹԻՒՆ ԶՈՐՐՈՐԴ

ԱՐՄ.—Ասան, խնդրեմ, ինչու համար այս գիրք գրողը գրել է 12 և 13 երեսների վրայ «ես լսում եմ, դու լսում ես և այլն».

ՀԱՅԿ.—Դա կոչում է խօնարհում, այսինքն վերցնում ենք մի բայ ու փոփոխում նրա ձևերը, ինչպէս որ խօսելիս ասում ենք. օրինակ՝ այժմ ես լսում եմ, մի ժամանակ լսում էի, երէկ լսեցի, վաղը լսելու եմ, թէ որ ինձ կըստիպէք ես պիտի լսեմ, թէ որ քիչ վատ մարդ եմ, բոլորովին չեմ լսիլ և եթէ ազատ լինեմ կը լսեմ:

ԱՐՄ.—Ասան խնդրեմ, ինչու այս գիրք գրողը գրել է 14 և 15 երեսների վրայ թէ բաժակ, բաժակի, բաժակից կամ ջուր, ջրի, ջրից:

ՀԱՅԿ.—Եղբայր այդտեղ ինչ կայ չհասկանալու, լսիր. բաժակ ընկաւ կամ բաժակն ընկաւ, բաժակի ջուրը, ջուրը թափուեց բաժակից, ջուրը բերին բաժակով, բաժակում ջուր կար, կամ թէ չէ ասում ենք՝ պարտիզում վարդէր բացուած, անցնում էի պարտիզով, պարտէզը կանաչել է, տես այն պարտէզը, որ ջրի ակիւն է շինուած: Այս բոլորը ասելու տեղ մենք չենք կարող միշտ բաժակ հա:

բաժակ ասել, կամ ջուր հա՛ ջուր, այլ բա-  
լոր բառերը փոփոխուում են իրենց վերջա-  
ւորութիւններով և այդ փոփոխումը կոչ-  
ւում է հոլս վում: Աշխարհումս կայ մի  
քանի միլիօն բաժակ, ուրեմն և մենք ասում  
ենք՝ բաժակներ և դա նշանակում է շատ,  
կամ ասում ենք ջրեր, պարաէզներ, այգի-  
ներ. օրեր և այլն, բայց որովհետև զիտենք  
որ Աստուած մէկ է, ուստի և չենք ասում  
Աստուածներ և կասենք այն ժամանակ երբ  
կռապաշտ մարդկանց սուտ աստուածներին  
մասին կխօսենք:

ԱՐԱՄ.—Մի բան էլ հարցնեմ ու պրծնում եմ.  
Ի՞նչ է նշանակում 16-րդ երեսի վրայ եղած  
ես, իմ, ինձ և այլ բառերը:

ՀԱՅԿ.—Իա էլ հոլովումն է. ահա ասեմ, ես գնա-  
ցի, իմ եղբօր մօտ, ինձ պատահեց հարսս և  
վերցրեց ինձնից գդակս, որովհետև նրանք  
ինձնով են ուրախանում, քանի որ ինձնում  
միայն լաւ բան են տեսել: Ահա այստեղ ես  
քեզ ցոյց տուի նոյն փոփոխութիւնները:  
Այս զիրք գրողը մասածել է, որ իր զիրքը  
կարող է մի օր քեզ պէս անփորձ մարդու  
ձեռքը ընկնել և գրել է, որ դու էլ սովորես:

Այսպէս չորս օր խօսեցին այս երկու բարեկամ-  
ները, Հայկը հասկացրեց Արամին և նա  
այնուհետև սկսեց կարգալ և գրել: Եթէ դու,

սիրելի ընթերցող, լաւ կարգաս այս չորս  
խօսակցութիւնը, դու էլ կը սովորես առանց  
ուսուցչի:

Ա Պ Ա Կ Ի.

Մեզնից շատ ու շատ տարիներ առաջ  
Փոքր Ասիայի սահմաններում գտնուած Միջեր-  
կրական ծովի ափին մի ժողովուրդ էր ապրում,  
որոնց փիւնիկեցի էին կոչում: Նրանք մեծ մա-  
սամբ վաճառականութեամբ էին զբաղում և շատ  
աւելի կրթուած էին, քան այն ժամանակուայ  
նրանց հարեան ազգերը:

Մի անգամ, երբ փիւնիկեցի վաճառական-  
ները նաւով բորակ (սելիտրա) էին տանում, ծո-  
վի ափը իջան հանգստանալու համար և ուզեցին  
տաք կերակուր պատրաստել: Ափը բոլորովին  
անապատ էր և մինչև անգամ քարեր չկային,  
որպէսզի կրակի վրայ կաթսայով կերակուր պատ-  
րասատէին, ուստի իրենց նաւից բորակի մի  
քանի մեծ կտորներ բերին և կրակի շուրջը դնե-  
լով վրան կաթսաները դրին: Կրակ վառած տեղը  
ծածկուած էր աւազով: Կրակի թէժութիւնից  
բորակը հալուեց և խառնուելով աւազի ու մոխ-  
րի հետ սառելուց յետոյ ապակի դարձաւ:

Փիւնիկեցիք շատ զարմացան և իսկոյն օ-  
գուտ քաղեցին այդ անսպասելի զիւտից և այնու-  
հետև իրենք սկսեցին ապակի պատրաստել: Այսօր

արդէն սպակի պատրաստելու բազմաթիւ գործարաններ կան:

ՊԵՏՐՈՍ ՄԵԾԸ.

Պետրոս Մեծը (Петръ Великій) ուսուց թագաւորների ազգից էր և 17 տարեկան հասակում թագաւորեց: Մինչև նրա գահ բարձրանալը ուսու ժողովուրդը շատ խղճալի դրութեան մէջ էր, չկային դպրոցներ, երկիրը լցուած էր աւազակներով, որի պատճառով վաճառականութիւնը բոլորովին կանգ էր առել: Բացի այդ թագաւորի պաշտօնեաները թալանում էին ժողովրդին, որովհետև ոչ կարգ կար և ոչ էլ օրէնքն էր գործադրում:

Պետրոս Մեծը ամբողջ երկիրը կարգի բերեց: Որպէսզի կարողանայ իր պետութիւնը կենդանացնել, նա քնաց Եւրոպա, հասարակ բանուորի պէս բանելով նաև շինել սովորեց, ուսումնասիրեց եւրոպական ազգերի նիստն ու կացը, կառավարութեան ձևը և վերադառնալով Ռուսաստան նրանց օրինակով բարեկարգեց իր հայրենիքը. ծովերը նաւերով լցուեցան, նոր նոր պաշտօնատներ հաստատուեցան, վաճառականները (մանաւանդ պարսկաստանցի հայ վաճառականները) արտօնութիւններ ու առանձին դիւրութիւններ ստացան:

Պետրոս Մեծը նշանաւոր եղաւ և իր մղած

պատերազմներով, բայց ամենից հետաքրքիրը նրա կեանքի մէջ Հոլանդիայի Սարդամ քաղաքում ապրած ժամանակն է: Այն տնակը, որտեղ նա ապրել է, դեռ այսօր էլ կանգուն է և տեղացի ժողովուրդը շատ հետաքրքիր կերպով պատմում է նրա կեանքը: Պետրոս թագաւորը ինքն էր փայտ կրում և կերակուր պատրաստում: Մի անգամ նա ցեխոտ կօշիկներով մտնում է իր ծանօթ ատաղձագործի մօտ, բայց հէնց դրան շէմքում նրան կանգնացնում է բարկացկոտ տանտիկինը: Թագաւորը ոչինչ չի ասում, իսկոյն հանում է իր կօշիկները և գոլպաներով ներս մտնում, որպէս զի նրանց մաքուր յասակը չը ցեխոտէ: Մի անգամ նա անցնում էր փողոցով, տեսաւ մի փողոցի տղայ, որ նրան ճանապարհ չէր տալիս և նրան մի կողմ հրելով առաջ անցաւ: Տղան վիրաւորուեց և թագաւորի երեսին փթած խընձոր խփեց: Թագաւորը սշբեց երեսը և ասաց ճներողութիւն, ես դեռ ևս կարծում եմ թէ Մոսկուայումն եմ գտնւում:» Երբ նրան հարցնում էին թէ ո՞վ է ինքը, նա պատասխանում էր. «ատաղձագործ եմ:» նա մի հոլանդացի արհեստաւորից նաւակ գնեց և ծախողի հրաւրով գնաց նրա հետ մաղարիչ խմելու:

Մէկ խօսքով նա 'ի սէր իր հայրենիքի ամեն բովից անցկացաւ և եթէ այսօր Ռուսաստանը մի գօրեղ պետութիւն է, մեծ մասամբ նրան են

պարտական:

Նա մեռաւ 1725 թուին:

Ն Ո Ր Գ Ա Ր Ո Ւ Ն

Քեզ ըսպասող չըմընաց,  
 Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն,  
 Գովքըդ ասող չը մընաց,  
 Զուր ես գալի, ա՛յ գարուն:  
 Սև-մութ պատեց աշխարհին,  
 Սար ու ձոր դառան արին,  
 Մեզ վայ բերեց էս տարին—  
 Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն:  
 Բիւլբիւլը գայ՝ թող ձէն սայ,  
 Էլ ո՞վ պիտի բեզ խնդայ,  
 Էլ ո՞ր սիրտը կը թնդայ  
 Զուր ես գալի, ա՛յ գարուն:  
 Բիւլբիւլն եկաւ՝ վարդ չունի,  
 Ծաղկոցը կայ՝ գարդ չունի,  
 Էլ ո՞վա որ դարդ չունի—  
 Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն:  
 Դու ես բերիք հաւքերին,  
 Ո՞նց տէր ըլնեն բըներին,  
 Սանդ տեղ չկայ մեր երկրին—  
 Զուր ես գալի, ա՛յ գարուն:  
 Աշուղի բերանը փակ,  
 Սաղ-քեամանչէն փակի տակ,  
 Սիւտն ա՛ էրևում անկրակ—  
 Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն:

Քեզ ըսպասող չըմընաց,  
 Զուր ես գալի, ա՛յ գարուն,  
 Գովքըդ ասող չըմընաց—  
 Ո՞ւր ես գալի, ա՛յ գարուն:

Յովհաննէս Յովհաննիսեան:

Ե Ր Ե Ի Ա Ն Ի Ա Ռ Ո Ի Մ Ը .

Մութ էր: Զորս կողմը լուռթիւն էր տիրում. մինը այն ահաւոր լուռթիւններից, որոնք զարհուրելի փոթորիկ են գուշակում: Լուել էին ոռուսաց թնդանոթները, լուել պարսիցը: Նրանք կարծես հանգստութիւն էին տալիս իրենց մահաշունչ բերաններին նոր ոյժով յարձակուելու և լափելու ամեն պատահածը:

Երևանն արդէն կիսով չափ փլատակների էր նմանուում, բայց Հասան խանը դեռ յամառում էր բերդը յանձնել ոռուսաց, դեռ նա յոյս ունէր դիմադրել, դեռ նա յոյս ունէր ազատուել նրանցից: Յանկարծ խորին լուռթիւնը ընդհատուեց ոռուսաց բանակից արձակուող մի թնդանոթի որոտմունքից. նրան հետևեց միւսը, երրորդը, չորրորդը և քառասուն թնդանոթ ձկսեցին միանգամից գոռալ ու ուռմբերով լցնել քաղաքը: Քիչ յետոյ գոռացին նաև պարսից թնդանոթները: Հասան խանը գունատուած, այլայլած, ձիու վրայ նստած, ինչպէս թակարդի մէջ բռնուած գազան, այս ու այն պարսպի վրայ էր վազում,

խրախուսում, քաջալերում իւր զօրքերին և ապա դառնացած սրտով նայում քաղաքին, ուր շինութիւնները մինը միւսի յետևից կործանուած էին, խորտակուած և իրանց փլատակների տակ թաղում բնակիչներին....

Խանը մտայոյզ առաջ էր գնում, երբ քաղաքի մի փողոցում նկատեց կարմրած ծիրանագոյն մի շերտ, որը հետզհետէ ընդարձակուած էր և լուսաւորում խանի դժգոյն դէմքը: Նա առաջ վազեց դէպի լոյսը. խուռն բազմութիւնը ճիչ ու կական էր բարձրացրել, բայց երբ նկատեց խանին, իբրև մի մարմին կանչեց.

— Խան, մենք մեռանք, անձնատուր եղէք...

Խանը կատաղեց: Նրա դժգոյն դէմքի վրայ անցան բարկութեան ալիքներ, աչքերը դուրս թռան ակնակապիճներից և վայրենաբար ամբոխին նայելով կանչեց.

— Լռեցէք, վախկոտ շներ:

— Խան, խնայիր մեզ...

— Ոչ մի ձայն, խանը մինչև վերջին կաթիլը կը պաշտպանուի և քաղաքը չի յանձնի գեաւուրներին, ասաց Հասան խանը, ձին մտրակեց, իւր ոտքերի տակ կոխկորտեց մի քանի հոգի և առաջ անցաւ: Նրա յետևից լսուեց ամբոխի խուլ ձայնը: Այդ ձայնը անէծք և նզովք էր թափում նրա գլխին:

Շուտով Հասան խանի ականջին հասաւ թմբուկների ձայներ և քիչ յետոյ ոռուական

«Ուռայի» ձայնը, որ հնչում էր պարսպից դուրս: Թմբուկների և ուրանների ձայնը հետզհետէ մօտենում էին ու Հասան խանի սիրտը լըցնում դառնութեամբ: Նա շփոթուած կանգնած էր և չէր էլ նկատում, թէ ինչպէս իւր մօտով վազում էին կանայք և շնչասպառ դէպի պարիսպները դիմում: Գիշերն արդէն նահանջում էր. և օրը լուսանում, թնդանօթների ձայնը հետզհետէ պակասում էր և նոցա փոխարէն լսում հրացանների ճայթմունքը: Հասան խանը տեսնում էր թէ ինչպէս ոռուսաց զնդերը արագ-արագ վազելով մինը միւսի ետևից մօտենում էին պարսպին ու նրա ճեղքուածքներից ներս մտնում քաղաք:

— Խան, պարսպների վրայ նայիր, տես գեաւուր հայերը ինչպէս կանչում են ոռուներին—, ասաց նրա ուղեկիցը, ցոյց տալով դէպի պարիսպը: Հասան խանը նայեց և բարկութիւնից ատամները կրճատցրեց. նա նկատեց բազմաթիւ հայ կանայք և տղամարդիկ, որոնք թաշկինակով նշան էին անում և հրաւիրում ոռուներին:

— Անիծուածները... միթէ չեն վախենում դրանք Հասան խանից, որի ձայնից դողում էին: Յառաջ, դէպի կռիւ—, կանչեց Հասան խանը: Նրան հետևեց մի խումբ զօրք: Փողոցները լի էին վառօդի ծխով, ամեն անկիւններից լսում էին հրացանների ձայներ: Հասան խանը ամուր սեղմելով սրի կոթը առաջ էր քայլում, երբ առաջից

մի վաշտ ոռոս գործ երևաց:

— Ալլա՛հ, փրկիր մեզ կանչեց նա և դառնալով իր գնդին աւելացրեց՝ ահա գեաւուրները, առաջ անցէք... բայց նրա գունդը տեղից չըշարժուեց:

— Վախկոտներ, անարգներ, գոռաց խանը կատաղութեամբ և ուզեց առաջ անցնիլ: Այդ ժամանակ փողոցի միւս ծայրից էլ լուսեցին ուրայի և հրացանների ձայներ: Պարսից գունդը գտնուում էր հրկու կողմից էլ կրակների մէջ:

— Գթութիւն—, յանկարծ գոռաց նա և հրացանները շարտեց գետին: Ռուս գունդը կանգ առաւ, սուխնները, որոնք պիտի խրուէին չասան խանի և պարսիկների սրտերը՝ վերև բարձրացան:

— Խան, սուրդ յանձնիր, ասաց մէկը: Խանը ցնցուեց և վայրենի մոնչիւն արձակեց:

— Երբէք... սո՞ւսց նա ու սուրը ուզեց իւր կուրծքը խրել, բայց վրայ հասնող ոռուս զինուորները բռնեցին նրան և գերի տարան...

Նրեանը արդէն առնուած էր:

«Հիւսիսի Արծիւը»:

Գ ի Ր.

Կարգա՛, այ՛ իմ խելօք մանուկ,

Կարգա՛, գրի՛ր դու ամեն օր,

Գիր կարդողի խելքն է կտրուկ,

Միտքը պայծառ ու լուսաւոր:

Գիր կարդալով—դու գրքերում  
Շա՛տ նորանոր բան կիմանաս,  
Շա՛տ շատերից՝ շա՛տ բաներում  
Մտքով հեռու կըսլանաս:

Գիր կարդալով—դու աշխարհիս  
կըճանաչես չարն ու բարին.  
Ո՛վ է խնդրում, ո՞վ է լալիս...  
Ո՛վ է զրկում հէգ թշուառին..

Գիր սիրելով—դու քո սրտում  
Արա՛տ, անբա՛ն գանձ կըդիզես.  
Սյնպիսի գանձ, որ աշխարհում  
Ամեն հարուստ գլուխ կտայ քեզ:

Դու կիմանաս, ի՞նչու մարդիկ  
Պէտք է ապրեն իրար համար.  
Ի՞նչ է մարդկանց տուն ու կարիք...  
Ի՞նչ է լոյսը, ինչ է խաւար...

Կարգա, այ՛ իմ խելօք մանուկ  
Կարգա՛, գրի՛ր դու ամեն օր,  
Գիր կարդողի խելքն է կտրուկ,  
Միտքը—պայծա՛ռ ու լուսաւոր:

Ա. Մատուրեան:

Ա.Ռ.Ա.Ծ.Ն.Ե.Ր.

Մարդու կատարած բարի ու չար գործերը

չեն մեռնում, թէպէտ ինքը մեռնում է: Խաղողի որթը երեք տեսակ պտուղ է տալիս, որոնցից առաջինն է հաճոյքը, երկրորդը՝ արբեցութիւնը, իսկ երրորդը՝ գղջումը: Նախանձոտ մարդը ինքն իրեն է տանջում: Պարտէզդ շրելու համար անձրևին մի սպասիր: Զգուշացիր կեղծաւոր մարդուց, փախիր բարկացկոտ մարդուց: Կեանքը մի կարճատև ճանապարհորդութիւն է: Խօսքն արձաթ է, իսկ լուծիւնը՝ ոսկի: Չար օրինակը նման է տարափոխիկ հիւանդութեան: Եթէ հարբեցողութեան դէմ դեղ ես որոնում, նայիր հարբած մարդուն: Ամենից առաջ ինքդ քեզ ճանաչիր: Որքան էլ մազը բարակ լինի, այնուամենայնիւ ստուէր է արձակում:

Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն.

Դարեր եկան, դարեր անցան, էջմիածին,  
Քո հիմն անշարժ ու անսասան, էջմիածին,  
Զեւ ձեռակերտ դու մարդկեղէն ու առօրեայ,  
Դու շողակաթ լուսոյ խորան էջմիածին:

Խաւարի մէջ դու վառուեցար որպէս կանթեղ,  
Վառ պահեցիր մեր սրտերում կայծն երկնային  
Անփառունակ սարուկ երկրի դու լուսագեղ  
Անշէջ փարոս դու լուսատու էջմիածին:

Յրուած հօտի դու ժողովող անփոյթ փարախ,

Հաստա՛տ լինի թող մեզ վերայ քո հովանին,  
Գրիգորի սուրբ օրհնութիւն ծաղկիւր խաղաղ,  
Փառք ապաւէն մեր աննման, էջմիածին:

Յ. Յովհաննիսեան.

Խ Օ Ս Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ

Ա.Ր.Ա.Մ.—Ոսա՛ խնդրեմ, Հայկ, ինչո՞ւ բառերի վերջում գրում են ս, դ, ն, ը տառերը...

ՀԱՅԿ.—Դրանք շատ հասարակ բաներ են, լսիր բացատրեմ. ասում ենք «տեղ», իսկ մի-մի անգամ էլ ասում ենք «տեղս և տեղդ». տեղս ասելու տեղ մենք կարող ենք ասել «այս տեղ», տեղդ ասելու տեղ կարող ենք ասել «այդ տեղ», ուրեմն այս ս նշանակում է այս, իսկ դ նշանակում է այդ: Եթէ այդ տառերը՝ բառերի վերջից կպած ս և դ տառերը վերցնենք առանձին-առանձին, նրանք ոչինչ չեն նշանակում:

Բացի այս, այդ տառերը ուրիշ նշանակութիւն էլ ունեն. օրինակ մենք ասում ենք «եղբայրս կամ եղբայրդ». «եղբայրս» նշանակում է իմ եղբայրը, իսկ «եղբայրդ» նշանակում է քո եղբայրը, ուրեմն այստեղ ս տառը գրուած է «իմ» բառի տեղ, իսկ դ տառը «քո» բառի տեղ:

Մենք տեսանք եզակի գործածութիւնը, հիմա տեսնենք յոգնակի:

ԱՐԱՄ.—Ասա՛ խնդրեմ, ի՞նչ բան է եղակի և ի՞նչ բան է յոգնակի:

ՀԱՅԿ.—Եղակի նշանակում է մէկ, օրինակ՝ ձի, քար, աստղ, իսկ յոգնակի՝ շատ օրինակ՝ ձիեր, քարեր, աստղեր: Հիմա տեսնենք միւս գործածութիւնները. ասում ենք «տուններս քանդուեց», դա նշանակում է, որ մեր տունը քանդուեց, իսկ եթէ ասենք «տուններդ քանդուեց», դա կը նշանակէ թէ ձեր տունը քանդուեց: Բացի այս տառերից, կան և ուրիշ տառեր, ինչպէս ինքդ ասացիր, որոնք բառի վերջումը գրուելով՝ առանձին նշանակութիւն ունին. մենք ասում ենք «մէկ տուն». հիմայ տեսնենք դա ում տունն է. այդ բանը չի կարելի որոշել, «մէկ տուն» ասելով կարող ենք կարծել որ դա Մարկոսի տունն է, Կիրակոսի տունն է, մեծ տունն է և այլն: Կամ թէ չէ ասում ենք «Արամը տուն գնեց», այստեղ էլ որոշ չէ թէ ում տունը, ուրեմն անորոշ է: Բայց երբ մենք ասենք «Մարգսի տունը», նշանակում է դա որոշ է, եթէ հարցնենք ում տունը, մեզ իսկոյն կասեն՝ Մարգսի տունը և հէնց այդ պատճառով «տուն» բառի վերջում աւելացնում ենք ը տառը, որ ցոյց է տալիս թէ տունը որոշ է: Ասում ենք «նա տունը գնեց» այդ ժամանակ նշանակում է, որ մենք արդէն

գիտենք թէ որ տունն է գնել: Շատ անգամ ը տառի տեղ գործ ենք ածում ն տառը և անա ինչպիսի կանոններ կան.

1. Երբ մի բառ վերջանում է ոչ ձայնաւոր տառով, գրում ենք ը. օրինակ «Վահանը գնաց ուսումնարան». այստեղ Վահան անունն վերջը գրուած է ը. կամ թէ չէ «տունը քանդուեց»:

2. Երբ նախադասութեան մէջ մի բառ վերջանում է ոչ ձայնաւոր տառով, բայց յետոյ եկած խօսքը սկսւում է ձայնաւորով, գրում ենք ն. օրինակ «Թաղէոսն եկաւ», եթէ այստեղ Թաղէոս անունից յետոյ եկաւ չը լինէր, այլ լինէր գնաց, կը գրէինք «Թաղէոսը գնաց», բայց «եկաւ» բառը սկսւում է ձայնաւորով և դրա համար էլ ը տառի տեղ գնում ենք ն:

3. Երբ մի բառ վերջանում է ձայնաւոր տառով, այն ժամանակ գրում ենք ն. օրինակ «մէկ ձի», բայց երբ որոշ է՝ «ձին», երբէք չի կարելի գրել «ձիը». այդպէս կան շատ բառեր, ինչպէս՝ որդին, մատանին, սատանան, ծառան և այլն: Այս էլ ասեմ, որ երբ մի բառ վերջանում է յ տառով և կարգալիս չի լսւում, այն ժամանակ յ տառը կորչում է և գրում են ն. օրինակ. ծառայ—ծառան, սատանայ—սատանան:

Հ Ա Յ Ջ Ի Ն Ո Ւ Ո Ր .

Գնահ, Հայ զինուոր ուրախ անխռով,  
Դէպ՝ այդ սուրբ հրաւէրն աներկիւղ սրտով,  
Առ ձեռքդ հրացան, կատարէ պարտքդ,  
Սուրբ հայրենեացդ մի խնայէ կեանքդ:

Դարեր են եկել, անցել զլորուել,  
Շատ կարօտել ենք, շատ էլ փափագել,  
Բայց անձնապաշտպան այդ զէնքը կրել  
Ոչ ոք իրաւունք հային չի տուել...

Այժմ ինքնակալ Կայսրն բարեխնամ,  
Տալիս է իրաւունք կրել ինքնակամ.  
Ուրեմն անվրդով այդ գտած գանձդ,  
Վերցնու, պաշտպանէ հայրենիքդ ու անձդ:

Վերցրու, գրնահ, թշնամուղ առաջ,  
Յոյց տուր հայութեան հողին ու սիրա քաջ.  
Որ ամենքը տեսնեն անվեհերութիւն,  
Ու ասեն. «Հայն էլ ունի քաջութիւն»:  
Յ. Ղաղարեան:

Հ Ո Ղ Ի Կ Ա Ջ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը .

Երկրի ամենավերին խաւին ասում են հող:  
Հողի այդ ամենավերին խաւը կազմուել է բու-  
սեղէն մնացորդներից և այդ այն հողն է, որ  
մշակում են: Այդ պատճառով էլ հողի այդ

ամենավերին խաւին ասում են՝ բուսական  
խաւ կամ մշակելի խաւ:

Մշակելի հողի զլիաւոր բաղադրիչ մասը  
կազմում են՝ կաւն ու աւազը: Այնպիսի երկիր-  
ներ կան, որոնց հողը բաղկացած է լինում մի-  
այն աւազից: Եթէ հողից մի բուռը վերցնենք,  
վրան ջուր ածենք և հուպ տանք,— եթէ գունդ  
կազմուի, նշանակում է մէջը կաւ է եղել և այդ  
կաւը միացել է աւազի հատիկներին, իսկ եթէ  
գունդ չդառնայ, կը նշանակէ գուռ միմիայն  
աւազ է եղել:

Եթէ հողի մէջ աւազ շատ լինի, նա փա-  
սակար կը լինի բուսեղէնի համար, որովհետեւ  
նրա միջով անձրեային ջրերը շուտով անցնում  
են և անձրեկից յետոյ աւազը շուտով էլ չորա-  
նում է. իսկ առանց ջրի բոյսերը չեն կարող  
ապրել: Բացի դրանից բոյսերի արմատները չեն  
կարող ինչպէս հարկն է պինդ մնալ և պինդ  
կպչել գետնին, որովհետեւ աւազը չափազանց  
շատ ցրուող է: Քամիներն էլ տեղահան են ա-  
նում աւազը և դէս ու դէն սփռում. հետեւապէս  
ցանած սերմերն ու բոյսերի արմատներն էլ ըն-  
կնում են գետնի երեսը և սկսում են չորանալ:  
Վերջապէս աւազը արևի տակ սառտիկ տաքա-  
նում է: Աւազահողը լաւացնելու, այսինքն բերրի  
դարձնելու համար՝ հետը կաւ են խառնում և  
կամ թէ կարմիր ուռնեխների (ուռի ծառեր) ճիւ-

դեր են տնկում աւազահողի մէջ, որքան կարելի է խորը: Ուռենիների ճիւղերը շուտով արմատ են բռնում և մի քանի տարուց յետոյ այնպէս աճում են ամեն կողմը և միմեանց հետ այնպէս կապկպում, որ ցրուող աւազին էլ պնդացնում են: Բացի դրանից՝ դուրս եկած թփերն էլ սրտուեր են դցում և թոյլ չեն տալիս, որ աւազը շուտով տաքանայ և չորանայ: Երբ թփերը բաւականաչափ մեծանում են, նրանցից թափուած տերևներից, ճիւղերից, նոյնպէս դուրս եկած փոքրահասակ խոտերից փոքր առ փոքր արգաւանդ (բերրի, պտղաբեր) հող է կազմուում:

2. Գրիգորեանց.

ԱՅ ՍԵՒ ԱՄՊԵՐ.

Այ սև ամպեր, վայ սև ամպեր,  
Սիրտս պատեց սև ու մութ.  
Եարաբ ի՞նչ էք դուք ինձ բերում,  
Գարնան անձրև՝ թէ կարկուտ...

Յուսով-լուսով արտ եմ ցանել,  
Արիւն թափել ու քրտինք.  
Ողջ սուրբերին մոմ եմ վառել,  
Աղօթք արել, որ երկինք  
Արտիս նայի, տունս խնայի,  
Օր տայ, կեանք տայ իմ հացին.  
Վայ բալեքիս... Աստուած չանի,  
Թէ որ անհաց մընացիս...

Այ սև ամպեր, ի՞նչ էք գոռում,  
Սիրտս պատեց սև ու մութ.  
Եարաբ ի՞նչ էք արտիս բերում,  
Գարնան անձրև՝ թէ կարկուտ...

Ա. Մատուրեան:

ԵՐԿԻՐ.

Այն երկրագունդը, որի վրայ մենք ենք բնակւում, միշտ այսպէս չի եղել: Այնտեղ, սրտեղ այսօր ծովեր ու գետեր կան, գիտուն մարդկանց ասելով մի ժամանակ ցամաք երկիրներ կարող էին լինել և կամ թէ այժմեան ցամաքային երկիրներից մի քանիսը կարող էին ծովով ծածկուած լինել: Այդպիսի փոփոխութիւններ առաջացել են երկրաշարժից և հրաբուխից և այդպիսի պատահարներից ազգեր ու երկիրներ են անհետացել՝ հողի տակ ծածկուել: Շատ անգամ գիտուն մարդիկ փորում են հողը և շատ տեղերում փորելիս գտել են կենդանիների, մարդկանց, ձկների կմախքներ: Մի ժամանակ երկրի վրայ ապրում էին հսկայ կենդանիներ՝ մամոնտ, ահագին փիղ, շատ մեծ եղջերու, բայց այժմ գտնւում են միայն դրանց փոքր տեսակները և այդ բանը իրաւունք է տալիս գիտնականներին ասելու, որ մեր երկիրը փոխուել է:

Երկիրը կտր է: Առաջ նա եղել է մի շիկա-

ցած կրակի զանգուածք, բայց հարիւրաւոր դարեր առաջ կրակը հանգել է և վերևի կեղևը սառել, որի վրայ մենք ենք բնակուում:

Եթէ դուք փորէք հողը, կը նկատէք, որ ինչքան խորն էք գնում, այնքան հողը տաք է լինում: Այդ նրանից է, որ երկրի միջուկը դեռ ևս չի սառել. այնտեղ ամեն ինչ հալուած գրութեան մէջ է գտնուում և մարդիկ կարծում են, որ այդ կրակէ հալուածքն է պատճառ, որ շարունակ երկրաշարժներ են լինում, որովհետև նա և նրա դազային օդը առաջ գնալու տեղ չէ գտնում և ներսից խփելով երկրի կեղևին՝ երկիրը շարժում է:

Շատ անգամ հարուածը լինում է ուժեղ և յանկարծ որևէ տեղ փոս բացուելով (սովորաբար լեռների գագաթին) սկսում է կրակ դուրս տալ, նետում է տաք աւազ, քարեր և վերջը սկսում է մի տեսակ թանձր շիկադած հեղուկ հոսել, որ լաւա է կոչւում: Լաւան իրեն պատահածը հալում—այրում է և վերջը ինքն էլ սառչում, բայց սառչելու համար շատ անգամ տարիներ են հարկաւոր:

Շատ անգամ երկրաշարժից յետոյ դեանից սկսում են տաք աղբիւրներ հոսել: Ջրի տաքութիւնը առաջանում է նոյնպէս երկրի միջուկի տաքութիւնից: Գետնից հոսող տաք ջուրը սովորաբար հանքային ջուր է կոչւում:

\*  
\* \*

Ես սարէն կուգայի, դուն դուռը բացիր,  
Ջեռըդ ծոցըդ տարար, ախ արիւր, լացիր:

Ես մի պինդ պաղ էի, դու մըրմուռ լացիր,  
Քո հրեղէն արցունքով ինձի հալեցիր:

Ես մի չոր ծառ էի, դու գարնան արև,  
Քո սիրով ծաղկեցաւ իմ ճիւղն ու տերև:

Թէ ինձ չէիր առնի, ինչո՞ւ սիրեցիր,  
Մի բուռ կըրակ եղար, սիրտըս էրեցիր:

«Հազար ու մի խաղ»:

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ո Ի Մ .

Պատերազմը կատաղի էր, մարդիկ կուռում էին գազանացած: Երկու կողմից էլ դիակներ էին գլորւում, բայց բոլոր ընկածները մեռած չէին: Վիրաւոր զինուորը չէր հարցնում կռուի պատճառը, նա ընկած տեղից նորից լցնում էր հրացանը: Լցրեց և որոտաց, նա չէր հարցնում, թէ իր գնդակը որի կուրծքն է մխուելու: Նա ոչոքին թշնամի չէր, նրան թշնամացրեց այն գնդակը, որ արիւնաթաթախ վայր գլորեց և ուժաթափ արեց:

Կռիւր զարհուրելի դարձաւ այն ժամանակ, երբ երկու կողմերը երես աւերես մօտեցան իրար և սկսուեց սուսերամարտը, սուխամարտը. այս անգամ ատրճանակի ձայներն էին լսում և



20000

Շուտով լոյս կտեսնեն մի շարք գրքեր «Հ Ա Յ  
Ջ Ի Ն Ո Ի Ո Ր Ի Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն» խորագրի տակ.

Սոյն գրքեր ստանալ ցանկացողները -պէտք է  
գիմեն հրատարակչին՝

Кіевъ, Тарасовская ул № 12, Свящ. Хорену  
Мнацаканяицу

կամ

Թիֆլիս, Ջաքարիա Գրիգորեանցի գրավաճառա-  
նոցը:

Գումարով վնողներին 20% զեղջ